

ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Կարեն Մարգարյանի ելույթը
<<Ազգային լրատվական գործակալություններ. արժեքներ, միտումներ,
և համագործակցություն>> համաժողովի ընթացքում

Հարգելի՛ գործընկերներ

Ուրախ եմ ողջունելու Ձեզ բոլորիդ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում: Եվ ցանկանում եմ նշել, որ Դուք այս պահին գտնվում եք զբոսաշրջության լավագույն կենտրոն համարվող և համապատասխան ենթակառուցվածքներով հագեցած մեր մարզի ամենագեղատեսիլ վայրում Հանքավանում:

Ես սիրով Ձեզ եմ փոխանցում նաև Կոտայքի մարզպետ պարոն Արամ Հարությունյանի ողջույնները և շնորհավորանքը <<Ազգային լրատվական գործակալություններ. արժեքներ, միտումներ, և համագործակցություն>> խորագիրն ունեցող այս կարևոր համաժողովի առիթով:

Համաժողովի գաղափարախոսությունը կարևոր է, քանզի ճշմարիտ տեղեկատվությունն ու տեղեկատվության ազատությունը այն կարևորագույն գործոններն են, որոնք առնցքային նշանակության ունեն ժողովրդավարության կայացման ու կատարելագործման ամենատարբեր հատվածներում:

Որպես պետական պաշտոնյա պետք է նշեմ, որ ժողովրդավարության ուղին անշեղորեն որդեգրած մեր երկրում բավականաչափ մեծ տեղ և դեր է հատկացվում ազատ խոսքին, մամուլի ազատությանը և այդ ամենի մեջ իր առանցքային և լուրջ դերակատարումն է ունենում հատկապես պետական տեղեկատվություն թողարկող հատվածը, որը տեղեկատվական ամենատարբեր ու զանազան հոսքերում դառնում է ճշմարիտ ու արժանահավատ տեղեկատվության փարոս և օգնում մարդկանց ստանալու ամենապահանջվածը՝ ճշգրիտ տեղեկություններ և պատշաճ իրազեկում:

Մենք, 21-րդ դարում բավականաչափ տեղ և դեր ենք հատկացնում տեղեկատվական միջավայրին, հատկապես այդ նույն տեղեկատվության էլեկտրոնային տարածմանը և այդ իսկ պարագայում առավել քան մեծանում է պետական տեղեկատվության դերն ու նշանակությունը:

Երկար տարիներ ղեկավարելով Կոտայքի մարզպետարանի տեղեկատվության բաժինը, քաջ գիտակցում եմ ինչպես պաշտոնական տեղեկատվության գերակա ուղղությունները, վերջինիս կառուցման, կիրառման և հանրային ծանուցման բոլոր սկզբունքային կարևորությունները, այնպես էլ քաջ գիտակցում եմ պետական տեղակատվական գործակալության և պետական կառույցների սերտ կապի և համագործակցության բոլոր անհրաժեշտությունները, որը մենք մշտապես ունենք և ունեցել են <<Արմենպրես>> լրատվական գործակալության հետ:

Մշտապես կողմնակիցը լինելով ազատ խոսքի, ազատ մտքի՝ ես նաև մեծապես կարևորել և կարևորում եմ պետական կառույցների համագործակցության արդյունքում ծնվող պաշտոնական խոսքի բոլոր գերակայությունները, որովհետև շատ հաճախ այդ խոսքն է այն կենսական ուժ ունեցող

գործոնը, որով կարելի է կողմնորոշել մի ողջ հասարակության, որով կարելի է ձևավորել հասարակական ճշմարիտ կարծիք և ինչու ոչ նաև այդ նույն հասարակությանը զերծ պահել տարբեր բացասական հոսանքներից, որոնք շատ հաճախ գալիս են ոչ պաշտոնական տեղեկությունների ներթափանցումներից:

Օգտվելով առիթից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Արմենպրես լրատվական գործակալությանը և հատկապես նրա ղեկավար պարոն Արամ Անանյանին այս կարևոր ձևաչափով նմանատիպ միջոցառում կազմակերպելու համար, որը համագործակցության լավագույն սկիզբ է և տեղեկատվության ոլորտում հետագա համատեղ ծրագրեր իրականացնելու լավագույն հնարավորություն:

<<Արմենպրես>> լրատվական գործակալությունը իր շուրջ մեկդարյա պատմության ընթացքում մշտապես ապացուցել և ապացուցում է իր լրջությունը, կարևորությունը, առանցքային նշանակությունը ինչպես մեր երկրի պատմության էջերում, այնպես էլ մեր հայրենիքի ապագայի կերտման գործում: Եվ այս պահին մեր հարգարժան գործակալությունն ընթանում է դրական զարգացումների նորովի ճանապարհով:

Շնորհակալություն:

Կարեն Մարգարյան

ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ

21.06.2014. Հանքավան,